

Հիւանդը 50 տարեկան ուժով անձ մ'էր, շատ տարիներէ 'ի վեր տտամոքսի հիւանդութիւն ունեցած էր և կերակուրները զփութաւ մարտնչուն համար միշտ փոփոխ դեղը ստիպուած էր գործածել։ Այս բուսական չելլար, ցաւալի հիւանդին ստուգը կամաց կամաց կը գոցուի 8 սեպտեմբեր 1887ին։ Մօի պատառ կլլած ժամանակ շատ զփութութիւն կը կրէր, և այն աստիճան կը հասնի որ ալ հաստատուն կերակուր չի կրնար ուտել և կերածն ալ խկոյն դուրս կուտար. այնպէս որ կը ստիպուի մինչև 20 գետեմբեր 1887 կէս հեղանիւթ՝ երբեմն բոլորովին հեղանիւթ կերակուրներով անանիլ։ Ժամանակ կուգայ որ և ոչ հեղանիւթ կերակուրները կրնայ կլլել, երթալով կը քոցուի. ստուգը և հագիւ կրնայ ամենաքիչ արգասակ խմել, այն ալ կուճկին վրայ կը կենայ և երկու վայրկենէն նորէն դուրս կու տայ։ Շատ անգամ վիրաւ չափերով կ'ուզեն զարման մը հասցընել անոր ստուգին, այլ անօգուտ։ Հիւանդին խորհուրդ կուտան երկու բժիշկ Ափրը, Բազնետ որ Պարիս երթայ. նա հաւանելով ասոնց սուած խորհրդոյն, կ'երթայ 'ի Պարիս, 5 փետրուար 1888ին։

Հիւանդը հոն տասը օր բերանը բան չի

յնեք, հագիւ երբեմն քիչ մը կաթ կը խմէ, բայց նորէն անկարելի կ'ըլլայ զայն իր ստամոքսը խափել, մեծ գփութութեամբ և նեղուելով դուրս կուտայ։ Տէրիլլոն շատ փորձեր կ'ընէ. բայց զհիւանդը այս ողորմելի վիճակէն չի կրնար ազատել, խեղճը կը ծխիւրի կը մաշի օրուան մէջ հագիւ երկու երեք գրամ շուք կրնայ բերանը դնել։ Այն ատեն Տէրիլլոն կ'առաջարկէ հիւանդին որ իր բտամոքսին վրայ ծակ մը բանայ. հիւանդը այս առաջարկը ամենայն սիրով և յօժարութեամբ կ'ընդունի. և երեւի հոշակաւոր վիրաբուժը կը պատրաստէ վիրահատութեան կարենոր գործինըրը, քլուակերպերով կը մարեցնէ զհիւանդը. կը ծակէ ստամոքսը և այս ծակին մէջ անցընելով առաձգական խէժէ խողովակ մի, ասոր մէկ բերանը արծաթ թելով կը կարէ հիւանդին ստամոքսին և կը սկսի այս խողովակին ձեռքովը աննդարար լոյծ նիւթերով լեցընել հիւանդին ստամոքսը։ Վիրահատութիւնը երեք ժամուան մէջ կը կատարուի։ Հիւանդը դիրաւ կ'արթննայ, և ալ անկից վերը իր առողջութիւնը գտնելով, օր օրուան վրայ կը դիրանայ և կ'ուժո՞նայ։ 1

Տէրիլլոն այս իր գիւտովն մեծ անուն հանեց և հոշակելի եղաւ ամէն տեղ։

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Չկներէ պատրաստուած ալիւր եւ հաց, Հանդերձ այնու որ փոխադրութեանց հնարք օր ի օր կը զարգանան, զարձեալ հարկ կու լինի՝ որ ձկնորսութեան յառաջ բերած արդիւնք կարենան, ճոխ վաճառականութեան մ'հանդիպելով. բոլոր ծախուիլ։ Վառն զի յաճախ հարինգ (Hareng) ձկանց որոն այնչափ առատ կու լինի, որ փոխադրել կաքելի եղած կողմեր բաւական գնող չեն գտներ զանոնք վաճառելու։ Այսպիսի դիպաց

մէջ ստիպուած էին որսապետք զայնս իբրեւ անասնոց կեր վաճառել, (արգարեւ սքանչելի կեր)։ Սինդիւտ ծովէն հեռու գտնուած աեղեաց մէջ՝ Թաթմ հարինգ ստանալ փափագողաց համար, սննդեան վերաբերող իրաց մասին հաստատուած գիրազնութեան օրէնք անկատար կու ձեւային։

Այսոր համար միշտ կը խնդրուէր, և արդեւ չկը խնդրուին. գործադրելի հնարք որով բոս կարելոյն նուազ գփութութեամբ փոխա

զրելի տնել ձկները. և տհաւսիկ Նորվեգիացիք, որ շատ մեծաշահ որսալայրեր ունին, այս կնճռոյս լուծում մի զտան. այս ինքն, սկսան ձկներէ ալիւր և հետեւապէս՝ հաց պատրաստել:

Այս աշխարհին մէջ առ սակաւն երկու գործատուն կայ որ այսպիսի պատրաստութեամբ կու զբաղին: Սոցա մին քանի մի ամաց հետէ հաստատուած է ի Լօփփօզէն, և կը պատրաստէ ձկնալիւր՝ մորթագերծ չոր բրածուկը (morue) մանրելով: Երբ ձուկն վատ տեսակ է կամ թէ որ հաւատարապէս զուլաներն այլ գործածեն իբրեւ առաջին նիւթ, հետեւապէս արգիւնքն այլ շատ ասորին կը լինի, և միայն անասնոց ի կեր. այլ բնդհաւատին: Երբ գործածուած նիւթն լաւ տեսակ լինի, աշխարհ այլ կտտարելապէս վայել է մարդուս սննդեան ծառայել:

Մական բնաւրազայն ձկնալիւր պատրաստողն է միւս այլ բնկերութիւնն հիմնուած ի 1891՝ վերջոյէ քաղքին մէջ, գործադրելու նոր եղանակով յատկապէս թիւն մի, զոր գտած է պր. Վոգուէլ, դասախօս ի համալսարանի ֆրիստանիոյ: Այս եղանակաւ, նախ ձուկն կը մաքրուի ի փշոց և ի մորթոյ, ապա կը չորցուի ցած բարեխառնութեան մէջ, և հուսկ կը փշրուի փոշեպէս. իբրեւ ձուկն՝ միայն գազ, (gadus aeglefinus) կը գործածեն: Այս գործատունս տարեկան 70, 000 կիլոգրամ ձկնալիւր կը մատակարարէ վաճառականութեան:

Այս ալիւր գինն խիստ բարձր է. բայց հարկ Է դիտել, որ սա առ մի կիրառում կու բովանդակէ յինքեան 20 կլզր. ձկան մնայ սննդաբար քամուքը (extrait), և թէ միանգամայն իւր մէջ կ'ամփոփէ 85 առ 100 բնասարկութիւն (éléments albuminés) տարրեր:

Այս ալիւրն զիւրաւորապէս կը գործածուի ձկնապուր և ձկան պուտինգ պատրաստելու՝ և նոյն իսկ քանակն յաղորդութեամբ այնու պակսիմաստ (biscuit) պատրաստել, խառնելով ի հետ իբր 60 առ 100 ցորենի օւլիւր. որ և խիստ ախորժահամ են և ընդ երկար պահուող: Իսկ իրենց սննդաբարութիւնն յայտնի է. վասն զի 16 առ 100 բնասարկութիւնն նիւթեր կը պարունակեն:

Վերն յիշեցինք որ երբեմն ձկնալիւրը կը գործածեն նաեւ ի կեր անասնոց: Այս գործածութիւնն սկսուած է արեւելեան Պրուսիոյ մէջ, և չնայելով անոր սաստիկ հոտոյն՝ կենդանիք այլ շատ ախորժով կ'ուտեն: Չայս կու տան խոզերու մինչեւ 250 գրամ բաժին առ 100 կիլզր. կենդանեաց կշռոյն. արջառոց 100 գրամ առ 100 կիլզր. իսկ ոչխարաց՝ 75 գրամ առ 35 կիլզր.: Այս տեսակ սննդատուութիւնն ամենեւին վատ ազդեցութիւն չունի անոնց մահն վրայ:

Մեր յաւելումը որ պր. Կորնէլին՝ ի Լիոն, այս կերպ սննդատուութեամբ սքանչելի արդիւնք ստացաւ կաթնատու կովերու վրայ:

Գալով ձկները օգտակար անելու և պաւլու եղանակաց, նշանակեմք հոս՝ ձկներելի կամ ձկներէ երլիկի պատրաստութիւնը: Չայս կու գտնեմք ի Կերմանիա, ուր յաճախ ծովագերեաց ձկնորսն այնչափ արդիւնաբեր կու լինի որ հարկագրուած են ձկներով հասարակ զանգուածք (guano) յօրսան: Չայս իմանալով արուստապէտք, յիշան անոնցմով երլիկներ պատրաստել, յաղող արդեամբք, մինչեւ կը հաստատեն թէ ոչ միայն լաւ ուտելի են, այլ և խիստ ախորժագրգիւ՝ երբ լաւ պատրաստուած լինին: Գինն այլ չափաւոր է, մի կիլոգրամ փոսնկէ մ'աւելի պահանջ չունեցով:

Ճաշակելի միջատք. — Ամենայն ինչ վարժութեամբ կարելի է ընել, և քանի որ տեսնեմք մարախը որ կանանչ մարգագետնոց վրայ ոստատելով կը գտնէ, կ'առնու իւր սնունդը մաքուր խոտերէն, և ինչու սա պիտի չուտուի, և ուրիշ այնչափ աղտեղի միջատներ և ձկներ պիտի ուտուին. ինչպէս գորտը որ լճացեալ չրոց զըզուելի որդերով կը սնանի, խեղճեղմիկը որ կը սնանի ապակեանեալ հիւթերով, և որուն համը շատ լաւ կը ճանչնան զինեւեղք նոյնպէս թիւնիկ ձուկը և այլք՝ որ ովկիանոսի հոտած ձրկներով կը սնանին, եւրոպացեաց համեղ կենդանիներն կը կազմեն: Յապոնաց պայտաբուկն սեղանին վրայ անպակաս է պնակ մը տղրուկ. կը զգուի եւրոպացիին քսելով թէ տղրուկն ալ ուտելու բան է. բայց սակայն՝ ինք կպչուն և ազատ խղճովը և ոտորէն ախորժակով կ'ուտէ: Յիւրապի ամենայն ինչ վարժութեամբ կարելի է ընել. որչափ անձինք կը զգուին ոտորէներէ, այլ. երբ կը

յաղթին իրենց երեակապուծեան, իսկոյն կ'ըսկսին անոնց մեծ բարեկամ ըլլալ, և այնուհետև անպակաս կ'ընեն իրենց սեղանոց վրայէն ոստրէից պնակները: Խոտալացիք ամենևին չեն ուզեր ճագարի միս դնել բերանին, բայց սակայն զգուշի գորտը ամենայն ախորժով կը լափեն: Անզղիացիք իրենց նախատրնք կը համարին գորտ ուտելը, ընդհակառակն կրիայի սէն կը շինեն իրենց ամենօրեայ ապուրը:

Հոովմայեցիք որ ամենէն աղնուական և փափուկ ազգն կը համարուին՝ ծառերուն միջէն հանելով մեծամեծ թրթուրներ, անոնցմով կը պատրաստեն իրենց կերակուրներն:

Այս թրթուրներուն լատիններէն անունն է *COSSUS*, զոր հայերէն փայտախանգար կ'առնուան Քաջուներն: Արդի քնազտը խընդոց մէջ են, թէ արդեօք Հոովմայեցւոց կերած թրթուրներն ճիշդ որո՞նք էին. գմանք կը տարակուսին փայտախանգարը ըլլալուն վրայ, որ կը գտնուի ուռնուոյ և մեծամեծ կաղնիներու բունին մէջ. իրաւացի է իրենց տարակուսիլը, վասնի զի այս թրթուրը ունի երկու ամենակարճ եղջիրներ. իսկ Պլինիոս կ'ըսէ թէ Հոովմայեցւոց կերած թրթուրներուն եղջիրքն շատ մեծ էին. հաւանակաւ է որ յայտնա ըլլայ այն՝ զոր կը կոչեն զաղղիացիք *capricorne héros* յիշատեն այժեղիւր, 3, 4 տարի կը կենայ կաղնիներու բունոց մէջ, և հոն քաղմամբ խոտոշներ կը բանայ:

Հոովմայեցիք որոնք շատ լաւ կը ճանչնային իրենց բերին համը, այնու հանգեք. կ'ուտեն այն մեծ և ջրոտ թրթուրները. ինչ ուրեմն մեզ տարօրինակ կ'երևի Մատակազարի բնակչաց չերածի որդ ուտելն. զաղղիացի նոսրատեղ անոնց համը աւեր են, և քառնց ամաչելու բնակչաց ըստ են որ դուք միայն բերնի համը գիտէք:

Ճենից ճանկից թրթուրներով կը սնանին, իսկ Ափրիկեցիք և Հոտտենտացիք իրենց մանկանց զլխէն կորսան ամենօրեայ կերակուր ենին:

Մարախը ուտելու սովորութիւնը շատ հին է, Հրէայք անոնց համը շատ լաւ կը ճանչնային, իսկ Աթենացիք իրենց սեղանին վրայէն պակաս չէին ըներ բեղնաւոր մաւ բախներով պատրաստուած կերակուրներ: Յնգիպտոս և ՚ի Մարաք սայլերով ճանապարհաց վրայ մարախ կը ծախեն: Կան տեղեր և ազգեր որ մարախը պարզ խաշելով կ'ուտեն, ոմանք կարագով կ'եփեն և միշտ թերեւ և տաներ կը հանեն կը նետեն. կ'ուտեն նաև խորովելով կրակի վրայ:

Երևելի Հետաքոտոն. Լիվինգսթոն կը

պատմէ՝ որ Ափրիկեցիք զմարախ շատ կը սիրեն և այն տեղաց մարախները շատ աւելի պարարտ և մեծ են, քան Եւրոպայի մարախներն: Նոյն խուզարկուն կը պատմէ որ Ափրիկեցիք ոչ միայն մարախն այլ նաև լաւ նամրիւն (*Termite*, տն. պէշազ գարնճա) կ'ուտեն, որ յետին աստիճանի զգուշի միշտ մ'է. եւրոպացին պարզ իմանալով կը խորշի, իսկ ափրիկեցին հազիւ զայն կը տեսնէ իր շիշերը ուրախութեամբ կը ցնցուին, իսկոյն զայն բերանը կը տանի և լափելը մի կ'ընէ:

Առաջ կը տանէ Լիվինգսթոն իր պատմութիւնը. կ'ըսէ թէ օր մը Ափրիկէ հետաքոտոնեան զագած ատեն, իշխան մը բարի եկարի կուգայ իրեն, Լիվինգսթոն ալ կը հանէ ծիրանով շինուած քաղար մը, կը հրամցընէ անոր բսկով. արդեօք կենացք մէջ այսպէս համով բսն ալ կերած եւ իր պատասխանէ Ափրիկեցին. « Կերած ես լաւ նամրիւնն »: Ոչ կ'ըսէ Լիվինգսթոն. « Լաւ եթէ կերած ըլլայիր բեղնաւոր լոնամրիւնով պատրաստուած կերակուր մը՝ երբէք ինծի չէիր մաղղիք անկէ աւելի համեղ կերակուր մը ուտել »:

Չոր հազ մանկանց: Փաղղիացի երեւելի բժիշկ մը մանկանց չոր հազի դեղ կը գործածէ սխտորը: Տաւը կաթիլ օշարակի հետ կը խառնէ տաւը կաթիլ սխտորի քամուկ, և երկու ժամը անգամ՝ ստրճի դպալով տղուն կու տայ: Եթէ այս դեղը օգուտ մ'ալ չընէ փառա ալ չըներ. վասն զի այս դեղը կ'ըսպաննէ տղուն որովայնի ճնիւները:

Թղթայ անիւ շոգեկառաց: Շիկապոյի մօտերը զործարան մի տարին 12, 000 թղթեայ անիւ կը շինէ: Թարգով պատրաստուած ստուարաթղթերը բարակ բոլորածն թերթերու վերածելով իրարու կը կպցընեն և կը թողուն զանոնք ջերմ սենեկաց մէջ որ լաւ մի չորնան, յետոյ անկից հանելով կը գնեն ջրաբաշխական մամուլոյ տակ, ուր անիւք սաստիկ կը ճմլին, իւրաքանչիւր անիւ կը բաղկանայ 200 թերթերէ: Կան շոգեկառաց որ մետաղեայ անուոց տեղ թղթէ անիւ կը գործածեն, վասն զի ասոնք կը խափանեն շոգեկառքի ցնցումները, որ բոլոր երկաթուղւոյ գաւազանները կ'արեւ կը փառսէ. այս անուոց երկրորդ օգուտն ալ այս է՝ որ շոգեկառքը անցած ժամանակ ամենեւին աղաղակ չի հաներ:

Հին կապերստները և գորգերը մաքրելու միջոց: — Հաստ կտաւները և գորգերուն փոշին մաքրելու և անոնց զոյնը կենդանացնելու համար, պէտք է նախ լաւ մը վրձինել՝ այնպէս որ ըստ բաւականի ելլայ փոշին, յետոյ փռել զով և հովահարեալ տեղ մի և տարածել վրանին ձիւն, վերջը վրձինով և կամ ցախաւելով աւել ձիւնը. գործողութիւնը լծնալէն վերջը հաստ կտաւները և գորգերը բոլորովին կը մաքրուին և կ'առնուն իւրաքանչիւր իրենց նախնական պայծառ և կենդանի գոյներն: Շատ տեղ այս կերպը կը գործածեն և միշտ յաջողած են: Աւելի պարսկական գորգերը այս կերպով կը մաքրուին:

Թաւտեր Ռիւանդուծիւն: — Երբ թոյլ կազմուածքով սկաւր անձինք անմիջապէս կերակուրէն վերջը թատրոն երթան և սկսին հոն հանդիսականաց բազմութեան մէջ ժամերով կենալ, վրանին տեսակ մը թմբուածիւն գալով կը մարին ու կ'էյնան: Այս հիւանդութիւնը թատերաց մէջ հանդիպելով անունը անկէց առած է: Դարմանն է հիւանդին զգեստները հանել և հորիզանական դրիք պտկեցնել բաց տեղ մը. հովահարել երեսը և մի քանի անգամ պաղ ջրով լուալ զլուխը. բաց աստի լաւագոյն է հիւանդին ներշնչել տալ անզոյի աղ ամենաբիշ քանակութեամբ. Այս դիրքով առ նուազն 15 վայրկեան պէտք է կենալ հիւանդը, և յետ առողջանալուն չի մոռնել նորէն հանդիսականաց մէջ, այլ շատով իւր բնականը դառնալ:

Իսկ կերպով կրնանք ազատիլ լուերէն: Լուերն այն անիծեալ միջատներն են որոնք կը անանին մարդու արեամբը. պոլս:

նին մանր է և բոլորչի, զինեալ կարծր մազերով, ունին դարձեալ գլխի վրայ մանր մանր սղոցներ որոնցմով կը ծակեն կը վիրաւորեն մարդու և անասնոց մորթը և կը սկսին արիւնը ծծել, իրենց սուր ծծիչ գործարանով: Իւրաքանչիւր լու այնպիսի ժամանակ կը ծծէ մարդու արիւնը, մինչև որ լաւ մի յագեցնայ, յետոյ կը թողուն կը փախչին: Մինչև ցայժմ լուերէն ազատելու համար կը սփռին անկողնոյ մէջ երիցուկի comomille (տե՛ս փափափա) ծաղկան փոշին. ստոյգ է թէ այս փոշոյն հոտէն կը փախչին լուերը, բայց այս անտեղութիւնը կայ՝ որ սա բոլորովին կ'աղտոտէ կը զուռաւորէ սաւանները, որով կ'ըստիպուինք երկու որ անգամ փոխել ճերմակեղէնները. այժմ ասկից զատ ուրիշ դեղազորածելի նոր միջոց մը գտնուած է, որ է ամէն իրիկուն պակկելէն առաջ 1 1/2 մետր հեռի հանել զգեստները և ուրիշ նոր ճերմակեղէնով մոնալ անկողին, առտու հանել նորերը, և շիները պատահանէն թոթիկելով, անոնց վրայի լուերը կը փախչին և այնպէս անվախ կրնամք զգեստը զանոնք: Սոյն միջոցը փորձուած և յաջողուած է և ընդունելի: Կատուներն անթիւ լու ունին, բայց անոնցը աւելի մանր և շատ աշխոյժ, եթէ կ'ուզեմք զանոնք լուերէն ազատել նոյնպէս միւս կենդանիները, կը խառնեմք ձէթի մէջ ծխախոտի փոշին, քսելով այս խառնուրդը անոնց վրայ իսկոյն կ'ազատեմք անասունները իրենց լուերէն:

Երբուպիոյ լուերն այնքան փառասկաւ չեն որչափ Ամերիկայիներն՝ սարասիելի են այն տեղաց լուերն, իսկ թած ժամանակ սաստիկ կը ցաւընեն և կը թունաւորեն: